

54

Կարճականական



P-1911

942002

ՃՐԱ

216/193

ՍԵՐՈ ԼԵԳԵՐԼԻՕՓ

ԿԱՐՄՐԱՎՃԻԿԸ

Թարգ. Լ. Բաբայեան.



№ 4

ՏԺԱՐԱՆ «ՀԵՐՄԵՆ» Մոլիրանեան փող. № 13.
1911

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա Ա

Տարբար մատուցության համար առաջարկ

ՀԱՐՄ.
Հ 9-3062

Հ 9-3062

85

552



ՍԵԼՄԻ ԱԾԳԵԲԼԿՈՓ

ԿԱՐՄՐԱՎՃԻԿԸ

Թարգ. Լ. Բաբայեան.

ՊԵ ԿՌՊԵԼ.

№ 4

ՏՓԽԻՄ
Տպարան «ՀԵՐՄԵԼԻՄ» Մուխրանեան փող. № 13.
1911

ԳՐԱԴԱՐԱՆ

57334-ահ



ԿԱՐՄՐԱՎՀԻԿՈ

Այս դէպքը պատահեց այն ժամանակ, երբ
Աստւած ստեղծեց ոչ միայն երկինքն ու երկիրը,
այլ և կենդանիներն ու բոյսերը, որոնց նա
խկոյն և թանգարակ տւեց:

Այն ժամանակի մասին շատ պատմութիւններ են մնացել և եթէ դրանք բոլորն էլ այժմ յայտնի լինէին, աշխարհիս բոլոր անհասկանալի բաներն էլ մեզ համար պարզ կը լինէին:

Եւ ահա մի անգամ Տէրը նստել էր դրախտի մէջ և ներկում էր թռչուններին, սակայն ներկը նրան բաւականութիւն չէր տալիս:

Եւ հէնց այդ ժամանակ էշն ստացաւ երկար

ականջներ, որովհետև նա երբէք չէր կարողա-
նում յիշել իրեն տւած անունը։ Մի քանի քայլ
անելուց յետոյ, նա մոռացաւ իր անունը, երեք
անգամ յետ դարձաւ և հարցրեց դրա մասին։
Այն ժամանակ Տէրը մի քիչ դուրս եկաւ համբե-
րութիւնից, բռնեց նրա ականջներից և ասաց.

—Քո անունն է՝ Էշ, Էշ, Էշ։

Եւ այդպէս ասելով նա այնքան քաշեց նրա
ականջներից, մինչև որ Էշն սկսեց լաւ լսել և
յիշել իր անունը։

Այդ նոյն օրը Տէրը պատժեց մեղւին։ Հէնց
որ ստեղծւեց մեղուն, նա իսկոյն ևեթ սկսեց
մեղը հաւաքել, իսկ կենդանիներն ու մարդիկ
առնելով մեղրի քաղցր հոտը, մօտեցան
մեղը փորձելու։ Սակայն մեղուն ցանկանում էր
ամբողջ մեղը իր համար պահել և դրա համար
էլ խայթում էր մեղրի խորիսին մօտեցող
բոլոր արարածներին։ Նկատելով այդ, Տէրը իր
մօտ կանչեց մեղւին և նրան պատժեց։

«Ես քեզ շնորք տւի աշխարհիս ամենաքաղցր
բանը—մեղը ժողովելու, բայց ես քեզ իրաւունք
չտւեցի այդպէս խիստ վարւելու քո մերձա-

որների հետ։ Իմացիր որ դու կը մեռնես, եթէ
թունաւորես որևէ մէկին, որ ցանկանում է քո
մեղրի համը ճաշակել...»

Հէնց այդ ժամանակն էր, երբ ծղրիդը
կուրացաւ, իսկ մըջիւնը զրկւեց իր թևերից,
այդ միևնոյն օրը շատ հրաշքներ պատահեցին։

Մեծ և հեզ Տէրը ամբողջ օրը անցկացրեց
դրախտի մէջ, ստեղծում և կենդանութիւն էր
սփոռում իր շուրջը, իսկ երեկոյեան դէմ նա
մտածեց ստեղծել մի փոքրիկ մոխրագոյն թըռ-
չուն։

«Յիշիր, որ անունդ կարմրավզիկ է,» ասաց
Տէրը թռչունին։

Նա բարձրացրեց թռչունին, և սա թռաւ։
Թռչնակը մի պայտ արաւ, ծանօթացաւ
այն երկրի հետ, որտեղ իրեն վիճակւած էր ապ-
րելու, իսկ դրանից յետոյ նա ցանկացաւ իրեն
դիտել։ Հէնց այդ ժամանակ նկատեց թռչնակը,
որ իր ամբողջ մարմինը, նոյն իսկ վիզը մոխրա-
գոյն է։ Կարմրավզիկը մի լաւ շուռ ու մուռ եկաւ և
սկսեց դիտել իր մարմնի արտացոլումը ջրի մէջ,
սակայն իր մարմնի վրայ ոչ մի կարմիր փետուր

չգտաւ: Դրանից յետոյ նա յետ թռաւ Տիրոջ մօտ: Տէրը բազմել էր ողորմածաբար և հեղորէն: Նրա ձեռքերից դուշս էին թռչում ազուաւները և ճախրում նրա գլխի վերև, աղաւնիները փարում նրա ուսերին, իսկ ոտների տակ թափւած էին վարդեր, շուշաններ և ուրիշ ծաղիկներ:

Փոքը թռչնակի սիրտը դողում էր երկիւղից, բայց այնուամենայնիւ նա թռչելով հետզհետէ մօտենում էր Տիրոջը և վերջի ի վերջոյ նստեց նրա ձեռքի վրայ:

Այն ժամանակ Տէրը հարցրեց նրան, թէ ինչու է նա վերադարձել:

—Ես ցանկանում էի Քեղ մի հարց տալ, պատասխանեց թռչնակը:

«Ի՞նչ ես ցանկանում», հարցրեց Տէրը:

—Ինչու համար են ինձ կարմրավզիկ կոչում, քանի որ ես ոտից մինչև գլուխս մոխրադոյն եմ: Ինչու են ինձ կարմրավզիկ անւանում, քանի որ մարմնիս վրայ մի կարմիր փետուր անգամ չկայ:

Թռչնակը իր փոքրիկ սև աչիկներով աղեր-

սական հայեացք ձգեց Տիրոջ վրայ և շուռ տւեց իր գլուխը:

Նա իր շուրջը տեսաւ կարմիր և ոսկեայ թեթև փոշիով ծածկւած կարմիր վասեաններ, կարմիր սանրերով աքաղաղներ, էլ չեմ ասում ուկէ ձկնիկներն ու վարդերը: Եւ իհարկէ, իսկոյն նրա գլխով անցաւ այն միտքը, որ բաւական է ինքն էլ մի փոքրիկ կարմիր թիծ ունենայ իր կրծքի վրայ, այն ժամանակ ինքն էլ հրաշալի թռչնակ կը լինի և իր անւանը իսկապէս արժանի:

—Ինչու համար են ինձ կարմրավզիկ կոչում, երբ ես ամբողջապէս մոխրագոյն եմ, մի անգամ էլ կրկնեց նա և սպասում էր, որ իրան Տէրը կը պատասխանի հետեւալը.

«Ա՛խ, բարեկամս, ես բոլորովին մոռացել եմ քո կրծքի վրայ եղած փետուրները կարմիր գոյնով ներկելու: Սպասիր, ես այդ կուղեմ»:

Սակայն Տէրը հանգիստ ժպտաց ու ասաց:

—Ես քեզ կարմրավզիկ կոչեցի և դու էլ պէտք է այդ անունը կրես: Սակայն գու ինքոք քո արժանիքներով պէտք է ձեռք բերես կրծքիդ վրայ կարմիր փետրիկներ:

Այդ խօսքերը ասելուց յետոյ Նա բարձրացրեց իր ձեռքը և թունակին թոցրեց։ Թունակը մտածելով թոչում էր դրախտի մէջ։ Ի՞նչ կարող է անել այդպիսի մի փոքրիկ թունակ, որպէս զի ձեռք բերի կարմիր փետրիկներ։

Նա մտածեց իր համար բոյն շինել վայրի վարդերի թփի մէջ։ Նա կարծում էր, որ վարդերի թերթիկները կընկնեն նրա կըծքի վրայ և իրանց գոյնը կը տան նըան։

* * *

Չատ և շատ տարիներ անցան այդ ամենաերջանիկ օրից։ Կենդանիներն ու մարդիկ արդէն վաղուց էին թողել գրախտը և ցըւել ամբողջ երկրի վրայ։ Մարդիկ սովորել էին մշակել հողը, նաւարկել ծովերի վրայ, իրանց համար հազուստներ և բնակարաններ պատրաստել, փառահեղ տաճարներ շինել և հիմնել այնպիսի հսկայական քաղաքներ, ինչպէս են Թերէն, Հռոմը և Երուսաղէմը։

Եւ ահա վրայ հասաւ մի օր, որը դեռ երկար ժամանակ անջնջելի կը մնայ մարդկային պատմութեան մէջ։ Այդ օրը առաւօտեան Կարմրավզիկը նըս-

տել էր մի ցածը և մերկ բլրի վրայ Երուսաղէմ քաղաքի պատերի տակ և բնում պատսպարւած իր փոքրիկ ձագուկներին երգ էր Երգում։

Կարմրավզիկը պատմում էր իր զաւակներին ստեղծագործութեան հրաշալի օրւայ և այն բանի մասին, որ Տէրը ՝ամենքին անուններ է տւել։ Իւրաքանչիւր Կարմրավզիկ այդ պատմութիւնը պատմել է իր Երեխաններին, սկսած ամենաառաջին այն Կարմրավզիկից, որը լսեց Աստծու խօսքերը և դուրս թռաւ նրա ձեռքերից։

—Եւ տեսէք, տիրութեամբ ասաց նա, այն օրւանից արդէն անցել են շատ տարիներ, ծաղկել են այնքան վարդեր, ձւերից գուրս են եկել այնքան թունիկներ, որ նրանց ոչ ոք չէ կարող հաշւել, սակայն Կարմրավզիկը դեռ ևս մնացել է մի փոքրիկ և մոխրագոյն թունակ և գեռ ևս չէ արժանանում կարմիր փետրիկների։

Նրա ճուտիկները լայն բաց արին կտուցները և հարցրին իրանց մօրը, թէ արդեօք նախնիքները փորձել են այնպիսի մի մեծ

գործ կատարել, որ արժանանան այդ անգնահատելի կարմիր փետրիկներին:

—Մենք ամենքս ամեն բան արինք, ինչ որ կարող էինք, պատասխանեց թուչնակը, բայց մեզանից ոչ ոքին չյաջողւեց ձեռք բերել այդ ցանկացած բանը: Կարմրավզիկը մի անգամ պատահեց իր նման մի թուչնակի և նրան այնպէս ջերմ սիրեց, որ իր սիրաը վառւեց. «Ահ, այժմ հասկանում եմ, մտածեց նա, Տէրը ցանկանում է, որ ես ջերմ և ուժգին սիրեմ, այն ժամանակ կրծքիս փետրիկները կը ներկւեն կը բակով, որ կայրի իմ սիրաը»: Սակայն նրան ոչինչ չաջողւեց, ինչպէս և մեղ ամենքիս, և ինչպէս չի յաջողւիլ և ձեզ:

Թուչնիկները տխուր ծւծւացին, այսինքն վշտացան, որ իրանց փոքրիկ և խաւոտ վզիկների վրայ երբէք կարմիր փետրիկներ չեն լինիլ.

—Մենք մեր յոյսը դրել էինք մեր երգի վրայ, շարունակեց իր պատմութիւնը պառաւ թոշունը: Արդէն առաջին կարմրավզիկը արդէն քաջութեամբ կուեց ուրիշ թուչնակների հետ և նրա կուրծքը վառւեց յաղթական կրակով. «Ահ, մտածեց նա, իմ փետրիկները կը ներկւեն կարմիր գոյնով պատերազմական այն կրակից, որ վառւում է իմ սրտում: Սակայն նա սաստիկ սխալւեց, ինչպէս մենք ամենքս, և ինչպէս կը սխալւէք և դուք:

թիւնը, որով ես երգս երգեցի և որը ապրում է հոգուս մէջ, կարմիր գոյնով կը ներկի իմ փետրիկները»: Սակայն նա սխալւեց, ինչպէս սխալւեցինք մենք ամենքս, ինչպէս կը սխալւէք և դուք:

Ճուտիկների կիսամերկ կոկորդից յանկարծ դուրս թռաւ մի ճիչ:

—Մենք մեր յոյսը դրել էինք նաև մեր քաջութեան և համարձակութեան վրայ, շարունակեց պառաւ թուչունը: Առաջին կարմրավզիկը արդէն քաջութեամբ կուեց ուրիշ թուչնակների հետ և նրա կուրծքը վառւեց յաղթական կրակով. «Ահ, մտածեց նա, իմ փետրիկները կը ներկւեն կարմիր գոյնով պատերազմական այն կրակից, որ վառւում է իմ սրտում: Սակայն նա սաստիկ սխալւեց, ինչպէս մենք ամենքս, և ինչպէս կը սխալւէք և դուք:

Ճուտիկները ոգևորւած ճշացին, որ իրենք էլ կը փորձեն խոստացւած բանը ձեռք բերել. սակայն պառաւ թուչունը պատասխանեց նրանց, որ այդ անկարելի է:

Ինչի՞ վրայ են նրանք իրենց յոյսը գնում,

երբ նրանց նշանաւոր նախնիքներն անդամ չեն կարողացել այդ բանը ձեռք բերել. ի՞նչ կարող են նրանք անել, եթէ ոչ միայն սիրել, երգել և կուել: Ի՞նչ կարող են նրանք անել...»

Թուչնակը չվերջացրեց իր խօսքը, որովհետեւ երուսաղէմի դռներից դուրս եկաւ ամբոխը և իր քայլերն ուղղեց դէպի այն բլուրը, որտեղ գտընտում էր նրա բոյնը: Այդ ամբոխի մէջ կային հպարտ ձիեր հեծած և նիզակներ բռնած զինւորներ, մեխեր և մուրճեր տանող դահիճներ, աչքի էին ընկնում քահանաներ և դատաւորներ, լացող կանայք, իսկ նրանց առջեկց գնում էր մերկ թափառականներից բաղկացած ամբոխը:

Փոքրիկ մոխրագոյն թուչնակը դողդողալով նայում էր իր բնի ծայրին նստած: Նա վախենում էր, որ նրանք կը կոխեն վայրի վարդերի թուփը և կը սպանեն իր ճուտիկներին:

— Նայեցէք, ասաց նա նրանց, ամուռ կպէք իրար և զգոյշ կացէք: Ահա մի ձի է գալիս ուղիղ մեզ վրայ: Ահա և մի զինուոր, որի կօշիկներին երկաթներ են կացրած: Դէպի մեզ է գալիս և ամբող ամբոխը:

Թուչնակը բոլորովին լռեց և հանգստացաւ: Նա գրեթէ մոռացաւ իրանց սպառնացող վտանգը: Յանկարծ նա մտաւ բնի խորքը և իր թեկրով ծածկեց ճուտիկներին:

— Ոչ, այս արդէն սարսափելի է, ասաց նա, ես չեմ ուզում, որ դուք ամեն ինչ տեսնէք: Ահա ամբոխը տանում է երեք աւագակներ խաչելու:

Եւ նա երկիւղով տարածեց իր թեկրը, որպէս զի իր զաւակները ոչինչ չըտեսնեն: Նրանք միայն լսում էին մուրճի հարւածները, ամբոխի և ժողովոդի վայրենի աղաղակները: Կարմրավզիկը ամեն ինչ մանրամասն դիտում էր: Երկիւղից լայն բացւած նրա աչիկները չէին հեռանում այն երեք դըժբախտներից:

— Ինչ դաժան են մարդիկ, մտածեց թուչնակը: Նրանք չբաւականացան այդ խեղերին խաչելով, դեռ ուզում են նրանցից մէկի գլխին էլ վշեայ պսակ դնել: Ես այստեղից տեսնում եմ, թէ ինչպէս վշերը արիւնոտում են նրա ճակատը: Իսկ այն մարդը այնքան գեղեցիկ է, նրա նայեացքը այնքան համեստ է, որ

չի կարելի նրան չմիրել: Երբ ես տեսնում եմ
նրա տանջանքը, ինձ թւում է, որ իմ սիրտը
ժակծում է սուր ոլաքներով:

Եւ թռչնակը աւելի և աւելի էր ցաւակցում
փշեայ պսակով խաչւածին:

—Եթէ ես արծիւ լինէի, մտածեց նա, ես
կը հանէի նրա ձեռքերից մեխերը և իմ սուր
ճանկերով կը ցրէի նրան չարչարողներին:

Նա նկատեց, թէ ինչպէս արիւնը հոսում
էր խաչւածի ճակատից և այլ ևս չկարողացաւ
հստել իր բնում:

—Թէև ես փոքր եմ և թոյլ, այնուամենայնիւ ես պէտք է որևէ բան անեմ այդ
դժբախտ Մարտիրոսի համար, մտածեց թռչնակը:

Նա դուրս թռաւ բնից, բարձրացաւ երկինք
և սկսեց լոյն պտոյտներ գործել խաչւածի զիսի
վերել:

Նա երկար ժամանակ թռչում էր, բայց
տատանւում էր մօտենալու խաչւածին, որովհետեւ
ինքը մի փոքրիկ և վախկոտ թռչուն էր և
երբէք չէր մօտեցել մարդկանց: Բայց նա հետզետէ սիրտ առաւ, մօտեցաւ նրան և իր կտու-

ցով հանեց փշերից մէկը, որ խրւել էր նրա
զլուխը: Հէնց այդ ժամանակ թռչնակի վրայ
ընկաւ խաչւածի արիւնից մի կաթիլ:

Այդ կաթիլը իսկոյն ևեթ ներկեց նրա վզի
և կըծքի փոքրիկ և քնքուշ փետրիկները:

Երբ թռչնակը նորից թռաւ դէպի իր բու-
նը, ճուտիկները աղաղակեցին.

—Քո կըծքի փետրիկները կարմիր են:
Նրանք վարդից աւելի կարմիր են:

—Դա այն թշւառ մարդու զիսից դուրս
եկած արեան կաթիլն է: Այդ արիւնը կանհետանայ, եթէ ես լողանամ առւակում:

Բայց որքան էլ լողանում էր փոքրիկ
թռչունը, կարմիր բիծը չէր անհետանում և
երբ նրա ճուտիկները մեծացան, նրանց վիզն
ու կուրծքն էլ զարդարւած էին կարմիր փե-
տուրներով, և այդ շարունակւում է մինչեւ
այսօր:



առաջ ու վերաբեր առ առ առ պատճի ընթացք ինչպէս ինչ

ու առ պատճի ընթացք ինչպէս ինչ



առաջ 1 առ պատճի ընթացք ինչպէս ինչ
առաջ 2 առ պատճի ընթացք ինչպէս ինչ
առաջ 3 առ պատճի ընթացք ինչպէս ինչ
առաջ 4 առ պատճի ընթացք ինչպէս ինչ

առաջ 5 առ պատճի ընթացք ինչպէս ինչ

առաջ 6 առ պատճի ընթացք ինչպէս ինչ
առաջ 7 առ պատճի ընթացք ինչպէս ինչ

22805 ԳԱՎԱՐԱՐԱՆ ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

- № 1 «Տէրտէրն ու իր Բալղի ծառան» . . . 1 կոպ.
№ 2 «Եսասէր Հսկայ» 1 կոպ.
№ 3 «Գող մաքին» 1 կոպ.
№ 4 «Կարմրավղիկը» 1 կոպ.

Պահաստը Թիֆլիզի «Գիր» գրավաճառանոցում.

Մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնի
Լեռն Բաբայեանի

ԲՈՒԺՈՎԻՆԱՅԻ ԵՒ ՄՈԼԴԱՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ
Պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն

54

Արթ
ամ

Հ203000

2013



H APM.
2-3062